# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**2025**

ՀՈՒՆԻՍ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

**1** **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում բնական աշխարհահամակարգ։**

1) արոտավայրը
2) քաղաքը
3) ջրամբարը
4) անտառը

**2** **Ստորև թվարկված միտումներից որի՞ պարագայում են մարդկության առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրներ ստանում համամոլորակային բնույթ ու դրսևորումներ։**

1) սոցիոլականացում
2) գլոբալացում
3) մաթեմատիկացում
4) էկոլոգացում

**3** **Ո՞րն է տեղանքում կողմնորոշման առավել ճշգրիտ միջոց.**

1) կողմնացույցը
2) Բևեռային աստղը
3) Արեգակը
4) լիալուսինը

**4** **1 : 50 000 000 մասշտաբ ունեցող գլոբուսի վրա երկու կետերի հեռավորությունը 5,6 սմ է։ Որքա՞ն կլինի դրանց իրական հեռավորությունը.**

1) 2800
2) 8750
3) 6800
4) 1450

**5** **Ստորև թվարկվածներից ո՞րն է ձևավորվում երկրագնդի պտույտի և միջուկում նյութերի տեղաշարժերի անմիջական պատճառով։**

1) ավազային անապատը
2) քարոլորտը
3) մագնիսական դաշտը
4) բևեռափայլը

**6** **Ստորև թվարկվածներից ո՞ր ժամանակաշրջանն է մտնում կայնոզոյան դարաշրջանի մեջ։**

1) տրիաս
2) օրդովիկ
3) կարբոն
4) նեոգեն

**7** **Ստորև թվարկվածներից ո՞ր ապարն ունի փոխակերպային ծագում։**

1) քվարց
2) կավիճ
3) բազալտ
4) ածուխ

**8** **Ո՞րն է Խաղաղ օվկիանոսի օվկիանոսային հոսանքներից։**

1) Գոլֆստրիմ
2) Բրազիլական
3) Պերուական
4) Բենգելյան

**9** **Ստորև թվարկվածներից ո՞ր լիճն ունի մնացորդային ծագում։**

1) Սևանա
2) Արալյան
3) Բայկալ
4) Աժդահակ

**10** **Մթնոլորտի ո՞ր շերտն է տարածվում 50-55 կմ բարձրություններում։**

1) օզոնային շերտ
2) վերնոլորտ
3) արտաքին ոլորտ
4) ներքնոլորտ

**11** **Ստորև թվարկվածներից ո՞րը կլիմայաստեղծ գործոն *չէ։***

1) տեղանքի բարձրություն
2) գերիշխող քամիներ
3) աշխարհագրական լայնություն
4) ամպամածության աստիճան

**12** **Ստորև թվարկված հողատիպերից ո՞րն է ամենաշատը պարունակում հումուս։**

1) կարմրահողեր
2) սևահողեր
3) պոդզոլային հողեր
4) դեղնահողեր

**13** **Որտե՞ղ են ստեղծվում օազիսները։**

1) կամպոսներում
2) սավաններում
3) սելվասներում
4) անապատներում

**14** **Ստորև թվարկվածներից ո՞ր նեղուցով է Մադագասկարը բաժանվում Աֆրիկայից։**

1) Բոսֆորի
2) Դարդանելի
3) Մոզամբիկի
4) Ջիբլարթարի

**15** **Ստորև թվարկվածներից ո՞ր քամիներն են ձևավորվում Աֆրիկայի արևադարձային գոտիներում և փչում են դեպի հասարակած։**

1) պասսատ
2) թայֆուն
3) տոռնադո
4) մուսսոն

**16** **Ստորև թվարկվածներից ո՞ր ծովածոցն է ողողում Ավստրալիայի ափերը։**

1) Գվինեական
2) Կարպենտարիա
3) Ադենի
4) Հուդզոնի

**17** **Ստորև թվարկվածներից ո՞ր կենդանին է ապրում Անտարկտիդայում։**

1) բադակտուց
2) համրուկ
3) կենգուրու
4) պինգվին

**18** **Ստորև թվարկվածներից ո՞ր ծառն է աճում Հարավային Ամերիկայում:**

1) կազուարիա
2) սեքվոյա
3) էվկալիպտ
4) սեխածառ

**19** **Ստորև թվարկվածներից ո՞ր բնական զոնան է տարածված Հյուսիսային Ամերիկայում:**

1) պամպա
2) լյանոս
3) պրերիա
4) սելվաս

**20** **Ստորև թվարկվածներից ո՞ր լեռնաշղթան է գտնվում Հյուսիսային Ամերիկայում:**

1) Սկանդինավյան
2) Կապի
3) Ապալաչյան
4) Ատլասի

**21** **Ստորև թվարկված գետերից ո՞րը *չի* հոսում Եվրասիայով:**

1) Յանցզի
2) Մուրեյ
3) Մեկոնգ
4) Ամուր

**22** **Ստորև թվարկված սարահարթերից ո՞րը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Լավրենտյան
2) Դեկանի
3) Արաբական
4) Գոբի

**23** **Ստորև թվարկվածներից ո՞ր գործող հրաբուխն է գտնվում Հարավային Ամերիկայում:**

1) Հեկլա
2) Կրակատաու
3) Էտնա
4) Կոտոպախի

**24** **Նշված պետություններից ո՞րն է ձևավորվել աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հին փուլում։**

1) Պորտուգալիա
2) Ղազախստան
3) Ասորեստան
4) Բյուզանդիա

**25** **Հետևյալ գետերից որի՞ ափին է ձևավորվել շումերական քաղաքակրթությունը։**

1) Տիգրիս
2) Արաքս
3) Յանցզի
4) Նեղոս

**26** **Նշվածներից ո՞րն է համարվում անկլավ։**

1) Սան Մարինո
2) Սան Ֆրանցիսկո
3) Սան Դիեգո
4) Սան Պաուլու

**27** **Նշված գործոններից ո՞րը *չի* ազդում բնակչության տեղաբաշխման վրա։**

1) կրոնական
2) բնական
3) ժողովրդագրական
4) պատմական

**28** **Ժողովրդագրական անցման ո՞ր փուլն է կապված տնտեսության զարգացման հետարդյունաբերական փուլի հետ։**

1) երրորդ
2) չորրորդ
3) առաջին
4) երկրորդ

**29** **Նշվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը առավել երկար։**

1) Անգոլա
2) Կոնգո
3) Մոզամբիկ
4) Իտալիա

**30** **Շաքարի արտադրության տեղաբաշխման վրա ո՞ր գործոնն է առավելապես ազդում։**

1) աշխատանքային
2) վառելիքաէներգետիկ
3) հումքային
4) էկոլոգիական

**31** **Նշվածներից ո՞ր երկիրն է համարվում կապիտալի խոշոր արտահանող։**

1) Տաջիկստան
2) Ղրղզստան
3) Աֆղանստան
4) Չինաստան

**32** **Նշվածներից ո՞ր կրոնը տարածված *չէ* ՌԴ-ում։**

1) սինտոյականություն
2) բուդդայականություն
3) քրիստոնեություն
4) մահմեդականություն

**33** **Նշվածներից ո՞ր թերակղզին *չի* գտնվում Հարավային Եվրոպայում։**

1) Բալկանյան
2) Սկանդինավյան
3) Պիրենեյան
4) Ապենինյան

**34** **Արևմտյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առավելապես անտառապատ։**

1) Ֆրանսիա
2) Շվեյցարիա
3) Ավստրիա
4) Գերմանիա

**35** **Հյուսիսային Եվրոպայի արդյունաբերության ճյուղերից ո՞րն է առաջատար։**

1) մետաղաձուլություն
2) մեքենաշինություն
3) սննդի արդյունաբերություն
4) էլեկտրաէներգետիկա

**36** **Նշվածներից ո՞ր տարածաշրջանն է առաջատար փյունիկյան արմավի արտադրությամբ:**

1) Հարավային Ասիա
2) Հարավարևելյան Ասիա
3) Արևելյան Ասիա
4) Հարավարևմտյան Ասիա

**37** **Հնդկաստանի ուղևորափոխադրումներում տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատար:**

1) ծովային
2) օդային
3) ավտոմոբիլային
4) երկաթուղային

Քարտեզ 1



**38** **Քարտեզ 1-ում Ը տառով ո՞ր նավահանգիստն է նշված։**

1) Շանհայ
2) Սինգապուր
3) Տոկիո
4) Թայբեյ

**39** **Քարտեզ 1-ում Զ տառով ո՞ր գետն է նշված։**

1) Ամուր
2) Մեկոնգ
3) Յանցզի
4) Հուանհե

**40** **Հետևյալ թելատու մշակաբույսերից որի՞ մշակմամբ է Աֆրիկան առավելապես առաջատար։**

1) ջութ
2) գանգրավուշ
3) սիսալ
4) բամբակենի

**41** **Լատինական Ամերիկայի մայրաքաղաքներից ո՞րն է գտնվում ավելի քան 3700 մ բացարձակ բարձրության վրա։**

1) Լա Պաս
2) Կիտո
3) Սան Խոսե
4) Լիմա

**42** **Հետևյալ գիտնականներից ո՞րը *չի* այցելել Հայաստան։**

1) Քսենոֆոն
2) Ալիշան
3) Հերոդոտոս
4) Պտղոմեոս

**43** **Ո՞ր լեռների արևելյան եզրին է գտնվում Թոնդրակ լեռնագագաթը։**

1) Ծաղկավետ
2) Զավախքի
3) Ծաղկանց
4) Գեղամա

**44** **Հետևյալ հանքավայրերից որո՞ւմ կա նեֆելինային սիենիտ։**

1) Մեղրաձոր
2) Արզնի
3) Շվանիձոր
4) Արթիկ

**45** **Հետևյալ բնակավայրերից որո՞ւմ է արևափայլի տևողությունը ամենաերկարը։**

1) Արտենի
2) Մարտունի
3) Արենի
4) Գյումրի

**46** **Հետևյալ դաշտերից որո՞ւմ կան աղուտներ.**

1) Մասրիկի
2) Արարատյան
3) Լոռվա
4) Շիրակի

**47** **Հետևյալ հատուկ պահպանվող տարածքներից ո՞րն է համարվում ազգային պարկ։**

1) Խոսրովի
2) Շիկահողի
3) Էրեբունու
4) Դիլիջանի

**48** **Վաչագան և Կավարտիջուր վտակները ո՞ր քաղաքով են հոսում։**

1) Կապան
2) Հրազդան
3) Սևան
4) Իջևան

Քարտեզ 2




**49** **Քարտեզ 2-ում Բ տառով ո՞ր սարահարթն է նշված:**

1) Եղվարդի
2) Կոտայքի
3) Ապարանի
4) Սիսիանի

**50** **Քարտեզ 2-ում Դ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Տավուշ
2) Գեղարքունիք
3) Սյունիք
4) Արագածոտն

**51** **Մինչև քանի՞ հազար բնակիչ ունեցող բնակավայրերում են կառուցում բուսատեխնոլոգիական մաքրման կայաններ։**

1) 9000
2) 5000
3) 20000
4) 10000

**52** **Զարգացած արդյունաբերական երկրներում առավելապես ի՞նչն է նպաստում հողերի վատթարացմանը։**

1) գերարածեցում
2) հողի վերին շերտի քայքայում
3) աղակալում
4) քիմիական աղտոտում

**53** **Ո՞ր նյութերի արտանետման պատճառով են առաջանում թթվային տեղումներ։**

1) ծծմբային միացություններ
2) աղային միացություններ
3) ածխածնային միացություններ
4) ազոտական միացություններ

**54** **«XXI դարի օրակարգը» ո՞ր քաղաքում է ստորագրվել։**

1) Յոհաննեսբուրգ
2) Ռիո դե Ժանեյրո
3) Ստոկհոլմ
4) Կոպենհագեն

**55** **Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ո՞ր տարածքն է համարվում վիճելի։**

1) Տրիեստ
2) Տրանսիլվանիա
3) Սաար
4) Սիլեզիա

**56** **Գրել այն ջրաէլեկտրակայանների համարները, որոնք գտնվում են Որոտանի գետային համակարգում։**

1) Սպանդարյանի
2) Տաթևի
3) Արգելի
4) Արզնիի
5) Շաքիի
6) Քանաքեռի
7) Զորագետի
8) Շամբի

**57** **Գրել այն լճերի համարները, որոնք ունեն սառցադաշտային ծագում։**

1) Պարզ
2) Սև
3) Աժդահակ
4) Արմաղան
5) Արփի
6) Ակնա
7) Քարի
8) Կապույտ

**58** **Գրել այն քաղաքների համարները, որոնք համարվում են ԱՄՆ-ի մեքենաշինության կենտրոններ։**

1) Վոլֆսբուրգ
2) Մյունխեն
3) Շտուտգարտ
4) Դետրոյթ
5) Թուլուզ
6) Չիկագո
7) Կիոտո
8) Թուրին

**59** **Գրել այն խառը ռասաների համարները, որոնց ներկայացուցիչներն ապրում են Բրազիլիայում։**

1) սուդանյան
2) եթովպական
3) ուրալյան
4) պարդո
5) սամբո
6) հարավսիբիրական
7) մետիս
8) մուլատ

**60** **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Ատլանտյան օվկիանոս։**

1) Վոլգա
2) Նեղոս
3) Կոլումբիա
4) Միսիսիպի
5) Պարանա
6) Հուանհե
7) Կոլորադո
8) Ամազոն

**61** **Գրել այն ծովերի համարները, որոնք ողողում են Հյուսիսային Ամերիկայի ափերը։**

1) Բարենցի
2) Արաբական
3) Չուկոտյան
4) Կարիբյան
5) Բերինգի
6) Կորալյան
7) Դեղին
8) Հյուսիսային

62 Արևելյան Եվրոպայի երկրները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ։

1) Ռումինիա
2) Ուկրաինա
3) Լեհաստան
4) Բուլղարիա

63 Հարավարևմտյան Ասիայի երկրները դասավորել հարավից հյուսիս հաջորդականությամբ։

1) Իրաք
2) Սիրիա
3) Քաթար
4) Օման

64 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 8,4 մ է, ջրի արագությունը՝ 5 մ/վ, որոշել գետի հոսքը կես ժամում։

65 Քաղաքի բնակչությունը 50 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 600 մարդ։ Ներգաղթողների թիվը 2000 է, իսկ արտագաղթողների թիվը՝ 2400։ Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո։

66 Երկրի բնակչության թիվը 180 000 է, ուրբանիզացման մակարդակը՝ 30%։ Որքա՞ն է քաղաքային բնակչության բացարձակ թիվը։

67 Տվյալ երկրի տարածքը 75000 կմ² է, իսկ ավտոճանապարհային ցանցի խտությունը՝ 2,5 կմ/կմ²։ Որքա՞ն է ավտոճանապարհների երկարությունը։

68 Որքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 4 տոննա նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5)։

**69** **Աշխարհի մետաղաձուլության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Ալյումինի արտադրությունը նույնպես հումքատար է ու տեղաբաշխվում է հումքառատ շրջաններում։
2) Պղնձի արտադրությունը էներգատար է, ուստի տեղաբաշխվում է էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում։
3) Մետաղաձուլությունը արդյունաբերության նորագույն ճյուղերից է և բաժանվում է երկու ենթաճյուղի՝ սև և գունավոր մետաղաձուլության։
4) Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է։
5) Երկաթի հանքաքարի նախնական մշակումը կատարվում է հումքի արդյունահանման շրջաններում։
6) Սև մետաղաձուլության արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է գունավոր մետաղաձուլությանը։

**70** **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Այծաբուծությունը զարգանում է հզոր արտադրական համալիրներում, որոնք կառուցվում են բնակչությամբ խիտ բնակեցված շրջաններում։
2) Մեղվաբուծության արտադրանքի ծավալով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ն, Մեքսիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը։
3) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
4) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և ուղտաբուծությունը։
5) Խոշոր եղջերավոր անասնապահության գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը։
6) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար են Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։